# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

## ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-23/42 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով աթոռների և գրապահարանների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

**Հայտերի բացման նիստը տեղի ունեցավ 14.03.2023թ. ժամը 14:30-ին էլեկտրոնային գնումների e-auction համակարգի միջոցով:**

**Գնահատող հանձնաժողով՝**

Հանձնաժողովի նախագահ՝ Սուսաննա Ազատյան

Հանձնաժողովի անդամ՝ Սյուզաննա Առստամյան

Հայկուհի Ադամյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Կարինե Բադալյան

**1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.**

1.1 Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

**2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.**

2.1 Ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| Հ/Հ | Մասնակիցների անվանումները |
|---|---|
| 1 | «Ֆոտոն» ՍՊԸ |
| 2 | «ՎԱՆԴԵԿՈՐ» ՍՊԸ |
| 3 | «ՆԱՐՎԱԿԻ» ՍՊԸ |
| 4 | « Ոյուտ Սենթր » ՍՊԸ |
| 5 | « Կարեն Գևորգյան» Ա/Ձ |
| 6 | «ԱԼԱՐԷԼԼԻ» ՍՊԸ |

**3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.**

3.1 Ընթացակարգով կայացած հակադարձ աճուրդի արդյունքում մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

| Չ/Հ | **Նախահաշվային գինը, ՀՀ դրամ** | Մասնակիցների անվանումները | **Վերջնական Առաջարկված գինը, ՀՀ դրամ** | |
|---|---|---|---|---|
| | | | Առանց ԱԱՀ | Ներառյալ ԱԱՀ |
| 1 | 4000248 | - | - | - |
| 2 | 3360000 | «Ֆոտոն» ՍՊԸ | 1800000 | 1800000 |
| | | «ՎԱՆԴԵԿՈՐ» ՍՊԸ | 2401000 | 2401000 |
| | | «ՆԱՐՎԱԿԻ» ՍՊԸ | 2500000 | 2500000 |
| | | «Ույուտ Սենթր» ՍՊԸ | 2800000 | 2800000 |
| | | «Կարեն Գևորգյան» Ա/Ձ | 3168000 | 3168000 |
| | | «ԱԼԱՐԷԼԼԻ» ՍՊԸ | 3300000 | 3300000 |

**4. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 2-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտերի կազմման և ներկայացման, հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

4.1 «Ֆոտոն» ՍՊԸ -ի կողմից ներկայացված հայտը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան, հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:**

**5. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 2-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման մասին.**

5.1 Մասնակցի ներկայացրած փաստաթղթերի հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքների արձանագրման նպատակով հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել հանձնաժողովի կողմից փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուսումնասիրելուց հետո 2023թ մարտի 16-ին, ժամը 14:10-ին:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:**

**Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 16.03.2023թ. ժամը 14:10-ին**

**6. Տվյալներ մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին**

6.1 «Ֆոտոն» ՍՊԸ -ի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝

6.1.1 Հավելված 1.2՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի 1.3.3 կետում բացակայում է հայտարարագիրը ներկայացնող անձի ստորագրությունը:

**7. Գնահատման գործընթացի կասեցման մասին.**

7.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 6.1.1 կետում արձանագրված անհամապատասխանությունը:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:**

7.2 Հանձնաժողովի նիստը շարունակել 2023թ մարտի 20-ին, ժամը 14:15-ին, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 6-րդ հարկ, 611 սենյակ հասցեում:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:**

**Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 20.03.2023թ. ժամը 14:15-ին**

**8. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.**

8.1 Մասնակիցը սահմանված ժամկետում շտկել է հանձնաժողովի կողմից 6.1.1 կետով արձանագրված անհամապատասխանությունները:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:**

**9. Տվյալներ ընտրված, այդպիսին չճանաչված և չկայացած չափաբաժնի վերաբերյալ.**

9.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը՝ 2-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած և բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից ընտրված մասնակից ճանաչել «Ֆոտոն» ՍՊԸ -ին:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:**

9.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2017թ թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը, մերժել «ՎԱՆԴԵԿՈՐ», «ՆԱՐՎԱԿԻ», «Ոյուտ Սենթր», «ԱԼԱՐԷԼԼԻ» ՍՊԸ-ների և «Կարեն Գևորգյան» Ա/Ձ -ի հայտերը:

9.3 Ընթացակարգի 1-ին չափաբաժինը հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ ոչ մի հայտ չներկայացվելու հիմնավորմամբ:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:**

**10. Գնահատման արդյունքների մասին**

10.1 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ ըստ որի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակցին ԷԱՃ-ով գնումների կազմակերպման կարգին համապատասխան ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:**

**Գնահատող հանձնաժողով՝**

____________ Սուսաննա Ազատյան

____________ Սյուզաննա Առստամյան

____________ Հայկուհի Ադամյան

____________ Կարինե Բադալյան /քարտուղար/